ԵՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
МЕДИЦИНСКАЯ АКАДЕМИЯ ЭРЕБУНИ ФОНД
EREBUNI MEDICAL ACADEMY FOUNDATION

EREBUNI
MEDICAL ACADEMY FOUNDATION

Address: Titogradian 133, 0087, Yerevan, RA
Tel: +374(10)47-07-60, +374(99)00-67-67
info@erebuniacademy.am, www.erebuniacademy.am

68

Հաստատում եմ

Ռեկտոր Ա. Ա. Իկիլիկյան

« » ____________ թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՄՈՒՀ-ի առաջնահերթ խնդիրներից է ուսումնառողներին հատկացվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացումը, որը միտված է կրթական նպաստավոր միջավայր ստեղծելուն:

1.2. Ակադեմիայում լրացուցիչ կրթական և խորհրդատվական գործունեությունը ուղղված է ուսումնառողների կողմից գիտելիքների յուրացման, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործընթացների լիարժեք ձևավորմանը:

1.3. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացումը բերում է ուսումնառողների կրթական կարիքների բացահայտման, դրանց վերլուծության, աջակցության ճիշտ ուղղորդման:

2. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակներն են.

2.1. Նպաստել ուսումնառողների մոտ արդի պահանջներին համապատասխան գիտելիքների բարձր մակարդակի ձևավորմանը

2.2. Նպաստել ուսումնառողների վերլուծական կարողությունների և հմտությունների ձևավորմանը

2.3. Օժանդակել ուսումնառողների շրջանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը

3. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացումը իր մեջ ներառում է

3.1. Ուսումնական մասի կողմից իրականացվող լրացուցւչ կրթական ծառայություններ

3.2. Ռեկտորատի կողմից իրականացվող լրացուցիչ խարհրդատվական ծառայություններ

3.3. Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող լրացուցիչ խորհրդատվություններ

4. Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման ընթացակարգ

4.1. Ուսումնական, ուսումնաօժանդակ ստորաբաժանումների կողմից կազմել խորհրդատվությունների ժամանակացույց

4.2. Ուսումնառողների կրթական և այլ կարիքների բացահայտման օժանդակության և ուղղորդման նպատակով

4.3. Կազմակերպել լրացուցիչ պարապմունքների գործընթաց և կազմել ժամանակացույց՝ հատկապես ցածր առաջադիմություն և առավել շատ բացակայություններ ունեցող ուսումնառողների համար

4.4. Սահմանել վարչական աշխատակազմին դիմելու ժամանակացույց՝ ուսումնառողների խնդիրները բավարարելու նպատակով:

4.5. Որպես խորհրդատու ընտրել ՄՈՒՀ-ի առավել փորձառու դասախոսներին՝ առավելությունը տալով տվյալ խմբում դասավանդողներին:

4.6. Խորհրդատուն կազմակերպում է խորհրդատվություններ ուսումնական գործընթացի, ուսման ընթացքում ծագած բարդությունների և ուսումնառողներին հետաքրքրող այլ հարցերի շուրջ:

4.7. Խորհրդատուն կազմում է աշխատանքային պլան և ժամանակացույց, որը հաստատվում է ուսումնական մասի կողմից:

4.8. Ուսումնական, ուսումնաօժանդակ ստորաբաժանումների կողմից ընտրված խորհրդատուները իրականացված լրացուցիչ խորհրդատվությունների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են ուսումնական մաս և որակի ապահովման ստորաբաժանում՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի վերջում: